

ԳԱԲՐԻԷԼԸ ՂԱՓԱՆԻ ՄԷՋ

Posted on August 7, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Չուարթ Աբելեան, 2008

*Չուարթ Աբելեանի այս գրութիւնը լոյս տեսաւ 2008-ին Գաբրիել Ինճեճիկեանին ի պատիւ կազմակերպուած հանդիսութեան մը առիթով՝ կազմակերպուած Գալիֆորնիոյ առաջին հայկական միջնակարգ ուսումնական հաստատատութեան [Սրբոց Նահատակաց Ֆերահեան Երկրորդական Վարժարան](#)ի շրջանաւարտներուն կողմէ: Յորելեարը հիմնադիր տնօրէնն էր դպրոցին (1964), եւ իր անխոնջ աշխատանքներուն շնորհիւ հաստատատութիւնը աճեցաւ ու ընդարձակուեցաւ հակառակ բազմապիսի դժուարութիւններու՝ յոսսադրելով ու մղելով հանրութիւնը նմանօրինակ ազգանուէր աշխատանքներու: Նոյն վարժարանին մէջ Տիկին Աբելեան շրջան մը պաշտօնակիցը եղած էր Գաբրիել Ինճեճիկեանին: **ԽԱՐ**.*

Այն օրերուն քեսապը սոսկ գաւառ մըն էր, ու գաւառի պարզ, անպաճոյճ լեզուով հաղորդուող տղայ մըն էր Գաբին: Պատահական ոճէ անհատի հետ հարազատ ազգականի նման խօսելու յատկութիւնը ունէր: Քեսապի ու համայն շրջաններու միակ բժիշկ, Տոքթօր Աւետիսի Ինճեճիկեանին տղան էր: Դժուար թէ մէկը համարձակէր իրեն պարոն Գաբրիել ըսել: «Ծօ՛, այդ “պարոնը” ուրկէ՞ եկաւ. “Շպէն” (քեսապերէն) ընկեր ըսէ՛, վերջացաւ»: Այդպէս ալ մնաց միշտ, համեստ ու ամենուն բարեկամը:

Չուարթ Աբելեան, 2008

*Չուարթ Աբելեանի այս գրութիւնը լոյս տեսաւ 2008-ին Գաբրիել Ինճեճիկեանին ի պատիւ կազմակերպուած հանդիսութեան մը առիթով՝ կազմակերպուած Գալիֆորնիոյ առաջին հայկական միջնակարգ ուսումնական հաստատատութեան [Սրբոց Նահատակաց Ֆերահեան Երկրորդական Վարժարան](#)ի շրջանաւարտներուն կողմէ: Յորելեարը հիմնադիր տնօրէնն էր դպրոցին (1964), եւ իր անխոնջ աշխատանքներուն շնորհիւ հաստատատութիւնը աճեցաւ ու ընդարձակուեցաւ հակառակ բազմապիսի դժուարութիւններու՝ յոսսադրելով ու մղելով հանրութիւնը նմանօրինակ ազգանուէր աշխատանքներու: Նոյն վարժարանին մէջ Տիկին Աբելեան շրջան մը պաշտօնակիցը եղած էր Գաբրիել Ինճեճիկեանին: **ԽԱՐ**.*

Այն օրերուն քեսապը սոսկ գաւառ մըն էր, ու գաւառի պարզ, անպաճոյճ լեզուով հաղորդուող տղայ մըն էր Գաբին: Պատահական ոճէ անհատի հետ հարազատ ազգականի նման խօսելու յատկութիւնը ունէր: Քեսապի ու համայն շրջաններու միակ բժիշկ, Տոքթօր Աւետիսի Ինճեճիկեանին տղան էր: Դժուար թէ մէկը համարձակէր իրեն պարոն Գաբրիել ըսել: «Ծօ՛, այդ “պարոնը” ուրկէ՞ եկաւ. “Շպէն” (քեսապերէն) ընկեր ըսէ՛, վերջացաւ»: Այդպէս ալ մնաց միշտ, համեստ ու ամենուն բարեկամը:

Եղաւ շրջան մը որ զանազան երկիրներէ ու վարժարաններէ միախումբ դասատուներ Հայաստան հրաւիրուեցան, ինչ որ ուսումնական վերապատրաստման ծրագիրներու հաղորդ դառնալու համար: Լիբանանի որոշ վարժարաններ ալ օգտուեցան վերոյիշեալ ծրագրումներէն: Հայ Աւետարանական վարժարանները հրաւեր չստացան:

1970 թուին անձնապէս ռուսական դեսպանատուն գացի:

«Ի՞նչ հարց ունէք, ինչդեմ», հարցուց պարոն մը խիստ կենցաղավարի:

«Կը փափաքիմ Պրն. Յակոբեանը տեսնել» (ամէն կարգի հարցերու պատասխանատուն):

«Մի վայրկեան», ըսաւ երիտասարդը ու հանդէպակաց դմնէն ներս մտաւ: Շտապ դուրս գալով «Հրամեցէք, Տիկին», ըսաւ ու հանդիպակաց դուռը ցոյց տուաւ:

Հագիւ ներս մտած`

«Ի՞նչ հարց ունէք, Տիկին», հարցուց ու հրաւիրեց որ նստիմ: Ապա`

«Պարոն Յակոբեան» ըսի, «Պէյրուքի մէջ շատ վարժարաններէն ուսուցիչներ Հայաստան դրկուեցան, իսկ մեր վարժարանէն մէկը չգնաց, արդեօք ինչո՞ւ...: Մենք ունինք շուրջ 1000 աշակերտ ու 70-ի շուրջ դասատուներ»:

«Ճիշտը` չգիտեմ, իսկ դո՞ւք էլ դասատու էք հայկական սիւթերի»:

«Այո՛, Պրն Յակոբեան, սակայն ինձմէ անջատ այլ դասատուներ ալ կան նոյն սիւթերով զբաղող»:

Լռեց: Ապա`

«Ինչ էլ լինի պարագան, եթէ նոյնիսկ մէկ վիզա ստանանք` Էդ վիզայով դուք պիտի գնաք, վստահ եղէք»:

Այդպէսով, անձնապէս խումբին միանալով գացի Հայաստան: Ամերիկայէն Գաբին ալ մեցի միացաւ Երեւան:

Հայաստանի մէջ հօրաքրոջս աղջկան ընտանիքը կը բնակէր Ղափանի շրջան. ընտանիքին միևնուճար որդին կը գործէր օդանաւին մէջ, Երեւանէն Ղափան գբոսաշրջիկներ տանելու ու վերադարձնելու գործով: Ամէն պարագայի, մեզի համար արգիլուած շրջան մըն էր այդ: Հօրաքրոջս մանչը յատկապէս եկաւ զիս հոն տանելու:

«Կը ցաւիմ, տղաս, չեմ կրնար երթալ, մեզի համար արգիլուած շրջան է», ըսի:

Ճիշդ այդ միջոցին, Գաբին վերէն վար կ'իջներ, երբ իմացաւ թէ հարցը ինչո՞ւմ է`

«Տղա՛ս, ես ալ ուսուցիչ եմ, քեսապցի եմ, Չուարթին ալ ազգական եմ: Ինք չ'երթար, ե՛ս կ'երթամ, զիս կը տանի՞ս... »

«Շահտ լաւ», ըսաւ երիտասարդը:

Հինգ վայրկեանը բաւեց Գաբրիին. 2 շապիկ, մէկ ժագէթ ու գիշերազգեստ մը շալկած վար իջնելն ու անհետանալը մէկ եղաւ տղուն հետ:



Երկու օր ետք, երեկոյեան, պանդոկ կը մտնէ, հազիւ թէ անկողնին վրայ ընկողմանած՝ հեռախօսը կը ձայնէ.

«Գաբրիել ջան, լաւ ժամանակ անցկացրի՞ր...» Եւ՝ լռութիւն... Ըսելու համար՝ իրենց խօսքով, «Գաբրիել ջան, դուք Սովետական Հայաստանում էք գտնուում, մենք տեղեակ ենք Ձեր իւրաքանչիւր քայլափոխին...»:

Անկասկած որ իրենք գիտէին Գաբրիին իւրաքանչիւր քայլափոխը, սակայն շատ հաւանաբար չէին գիտեր որ իրենց գործը ամէն պարագաներու, ամէն պայմաններու տակ, խիզախ ու յանդուգն մէկու մը հետ էր, որոնք եղան յատկանիշները արտաքնապէս հանդարտ, բայց ներքնապէս աննկուն քեսապցիներուն հարազատ Գաբրիին:

